ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 11 հունվարի 2008 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը
Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի և Ռ. Պապայանի

Քննության առնելով «Ռադիո Հայ» ՍՊԸ-ի դիմումի ընդունելիության հարցը
(դիմողի ներկայացուցիչ՝ Հայկ Ալումյան)

ՊԱՐԶԵՑ

«Ռադիո Հայ» ՍՊԸ դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով Հեռուստատեսության և ռադիոյի մասին << 2000թ. հոկտեմբերի 09-ի ՀՕ-97 օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի դրույթների սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է << Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին << օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են << Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին << օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

«Ռադիո Հայ» ՍՊԸ-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի մասին << 2000թ. հոկտեմբերի 09-ի ՀՕ-97 օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի «Հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար արտոնագրատերը մուծում է տարեկան ենթավճար, որի չափը հաշվարկվում է՝ ելնելով միայն հաճախության սպասարկման համար անհրաժեշտ ծախսերից» դրույթի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել << Ազգային ժողովին: